

## Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

«ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ» ըստ Անձևացեաց օրինակի.—  
Ծանօթութիւններով և հայ-ուսերէն բառագրքով ի լոյս ընծայեց  
ուսուցիչ Լազարեան ձեմարանի Արևելեան Լեզուաց Խ. ՅՈՎՀԱՆՆԻ-  
ՍԵԱՆԻ: Մոսկւա, 1892 թ. 8<sup>օ</sup>, Ա--Ջ+391 էջ.— գինը 1 ռ. 50 կ.:

Խորնացուց լետով՝ Նղիշէն ամենապառաւոր տեղն է բռնում թէ  
Ոսկեղէն դարու և թէ ընդհանրապէս հազ գրականութեան պատմութեան  
մէջ, Գրւած լինելով արձակ՝ պատմութեան ոճով, ոչ ազատ հետազոտական  
ալաբանութիւններից և աստուածաբան հուրը դատողութիւններից, — նորա  
«Վարդանանց և հայոց պատերազմը» իսկապէս ներկայացնում է մի վառ-  
վառ և կենդանի բանաստեղծութիւն՝ թէև առանց չափ ու ոտի, ալս մի-  
վտեմ ազգային վիպասանութիւն է ամենանշանաւոր մի ազգովին շարժման,  
որի նմանը ոչ առաջ և ոչ լետով եղած չէ մեր պատմութեան մէջ, և և թէ  
ալսօր՝ 15 դար անցնելուց լետով էլ ամենուրեք դեռ կենդանի է ժողովրդի  
մէջ կրօնական բռնութեան դէմ իւր անվախ մաքառողների մեծ վշա-  
տակը, — իսկ, եթէ ոչ Նղիշէին ենք մենք պարտական:

Այս իսկ պատճառով էլ Նղիշէն մեր նախնիքների համար եղել է  
միշտ ընթերցանութեան ամենասիրելի գիրքը՝ թէ հնումը և թէ վերջին  
դարերում, թէ իբրև ձեռագիր և թէ տպագիր: Արդէն մեր պատմագիր-  
ների մէջ գուցէ ամենքից բազմաթիւ ձեռագրեր Նղիշէինն են մեզ հասել:  
Եթէ դիմենք տպագրական հրատարակութիւններին, կը տեսնենք, որ դոցա  
թիւը առնազը երկու տասնեակից պակաս չէ՝ հաշվելով միայն ընագրի  
տպագրութիւնը. իսկ թարգմանութիւնների հետ միասին մօտ 30-ի է հա-  
նում, որ պատկառելի թիւ է մի մատենագրի ժողովրդականութիւնը փա-  
լուն կերպով ապացուցանելու հաւերիս մէջ:

Աւելորդ չէր լինիլ ակտեղ երկու խօսք ասել Նղիշէի «Վարդանանց  
պատերազմի» ընագրի և թարգմանութիւնների հրատարակութիւնների մա-  
տին, որ բաւական կարեւոր խնդիր է գրական պատմութեան համար: Հ. Գ.

Ջ.-ի շատ կողմից հետաքրքրական «Հայկական Մատենագրութիւնը» (Վե-  
նետիկ, 1883 թ.) ախոս, որ ալս խնդրի վերաջէ դարձրել ալս ուշա-  
գրութիւնը, որին նա արժանի էր Ք. Պատկանեանի (Библи. очерк. арм.  
пстор. Изт. 1880) ցուցակն էլ թերի է կազմած: Այդ մասին մի փորձ  
է արել հանդուցեալ Միք. Միանարեանցը իւր բաղմոգոտ Bibliographia  
Caucasica et Transcaucasica I հատորում (Պետերբ. 1874—76), որ  
մատամբ լրացնելով մեր ձեռքի տակ եղած աղբիւրներից և ժամանակա-  
դրական կարգով դասաւորելով, առաջարկում ենք ահաւասիկ ընթերցո-  
ղին՝ հաւատարմաբար չ'ընկնելով սակաւն, որ մեր կազմած ցուցակը լիա-  
կատար է:

1. Ներշնչի բնագրի հրատարակութիւնները.

|                                                  |                                    |
|--------------------------------------------------|------------------------------------|
| I 1764, 4°. Պոլ. (Editio princeps)               | XI 1859, 8° (ամբ. մատ.) Վենետ.     |
| II 1787, 16°. Ս. Պետերբուրգ:                     | XII 1861, 16° Թէոդոս. (Անձն. օր.)  |
| III 1787, 16°. Նոր-Նախիջևան:                     | XIII 1861, 16° Մոսկա:              |
| IV 1813, 16°. Պոլիս, («Հայկակ.<br>Մատեն.» 1823): | XIV 1861, 24° Վ. (հ. մատ. չիք):    |
| V 1816, կաշի, (միայն Միանս.):                    | XV 1865, 12° Երուսաղէմ:            |
| VI 1825, («Հայկ. Մատ.» չիք)                      | XVI 1866, 16°, Պոլիս:              |
| VII 1828, 24°,                                   | XVII 1867, 16°, Զմիւռնիա:          |
| VIII 1832, (միայն Ք. Պատկան.)                    | XVIII 1871, Պոլիս (միայն Дилкенъ): |
| IX 1838, 8° (ամբողջ մատեն.)                      | XIX 1879, 16° Թիֆլիս (Անձ. օր.):   |
| X 1852, 16° (Հայկ. մատ. չիք)                     | XX 1892, 8° Մոսկա (Անձ. օր.):      |

2. Ներշնչի ընդգրկի թարգմանութիւնը հաւ և օտար լեզուներով:

|                                                         |                                                        |
|---------------------------------------------------------|--------------------------------------------------------|
| 1. Անգլիէ բէն, Նէմանի, 1830,<br>4°. Լոնդոն:             | 8°, Թիֆլիս:                                            |
| 2. Իտալիէ բէն, Կապելետտի, 1840<br>8°, Վենետիկ:          | — Նոյնը, Դիլլէն, 1881, 8°, Խարկով<br>(ոչ լիակատար):    |
| 3. Ֆրանսիէ բէն, Կապարաջի Կա-<br>րապետ, 1844, 8°, Փարիզ: | 5. Հաւ-Աշխարհիկ, Մ. Սիմեո-<br>նեանց, 1863, 8°, Թիֆլիս: |
| — Նոյնը, Լանգլուա, 1868, Փարիզ:                         | — Նոյնը, Հ. Ղուկասեանց, 1891,<br>8°, Թիֆլիս:           |
| 4. Ռուսիէ բէն, Շանշեան, 1853,                           |                                                        |

\*  
\* \*

Անցնենք ալժմ Ներշնչի նոր հրատարակութեան, որի խորագիրը  
գրւած է մեր լեզուով գլխում,—«Մեր գրոց լեզուն, ասում է ի միջի ալոց  
հրատարակիչը իւր լաւաջաքանում, նոյնպէս կլասիկական է, ունի լատին  
և լոյն լեզուների համարեա բոլոր լատիւթիւնները... Սակայն մինչև ալժմ  
ոչ մի՛նք հաւոց հեղինակներից ծանօթութիւններով, բաւարքով ճոխացրած  
լատարացրած չէ աշակերանների դործածութեան համար: Այս զգալի պակա-

սորդը լրացնելու գիտատրուութեամբ... քանի տարի գործնից առաջ մենք ձեռնամուխ եղանք ալս դժուար գործին և լուսարանելով Նդիշէի պատմութեան բնագիրը, գրեցինք պատմական, աշխարհագրական և մասամբ էլ լեզուագիտական ծանօթութիւններ, որոնց հետեւում է հայերէնից ռուսերէն բառգիրքը (Յառաջաբ. էջ Ա—Բ), Ուրիմն Նդիշէի նոր հրատարակութիւնը պատրաստւած է մանկավարժական նպատակով՝ իբրև ձեռնարկ մեր ուսումնարանների համար:

Նոր լուս տեսած դասագիրքը և ձեռնարկը և ալ՝ մեր դասական մասնագիրները—անքան կարևոր խնդիր է, որ ալք արդէն բաւական հիմն է մեզ համար մանրամասն քննութեան ենթարկելու Նդիշէի նոր հրատարակութիւնը, յիշէ՛ որ և է մի ընդհանուր գրածի արժանաւորութեան կամ պակասութեան մասին շատ օգտաւէտ է լուրջ քննադատութիւնը՝ քաջալերելու կամ՝ ընդհակառակը, զգուշացնելու գիտմամբ, —ևս առաւել մի դասագրքի մասին, որ՝ մի անգամ մուտ գործելով զպրոց, առաջնորդ է դառնում և մի տեսակ պատգամ կրթող սերունդին երկար տարիներին ընթացքում, ևա է, եթէ դասագիրքը հմտութեամբ է յօրինւած և նպատակաւարմար՝ ձեռնհաս մասնագէտի աշխատութեամբ. հասկնալ եթէ նա անփորձութեամբ է կազմւած, ձախ ձեռքով ինչպէս ասում են, պակասաւոր և խառնափնթոր... Ահա ինչու համար մեծ զգուշութեամբ պէտք է ընտրել ամեն մի դասագիրք ու ձեռնարկ:

Տեսնենք ալժամ, որ աստիճան՝ եթէ ոչ կատարեալ, գոնէ կատարելագործւած է Նդիշէի նոր հրատարակութիւնը Նախընթացների շարքում և որչափ լարմարաւոր է և գոհացուցիչ ալն նպատակին, որի համար նա ձեռնարկւած է, և որովհետև հրատարակութիւնը բաժանւած է երեք մասի—բնագիր, ծանօթութիւններ և բառգիրք, մենք էլ ալն կարգով կը խօսենք իւրաքանչիւրի մասին:

#### ա. Բնագիր:

Հրատարակիչը, ինչպէս երևում է գրքի խորագրից, Նդիշէի պատմութեան բնագիր է ընտրում «Անձնացեաց օրինակը», լուսանցքում նշանակելով Վենետիկ. տպ. (1859) տարբեր ընթերցումները: Բայց թէ ինչ բան է «Անձնացեաց» ասած օրինակը, ինչ առաւելութիւններ ունի նա միւս օրինակների վերայ, ինչ հիմունքով ալք և ոչ ալք օրինակ է ընտրւած, —և ոչ մի խօսք չէ ոչ չառաջաբանի և ոչ ծանօթութիւնների մէջ—Մինչդեռ արժէր համեմատել Անձ. օրինակը I տպ. (Պոլիս) և Պետերբուրգեան (1787), որպէս և Վենետիկեան բոլոր հրատարակութիւնների հետ, և մանրաքննին ուսումնասիրելով նոցա տարբեր ընթերցումները՝ արդէն ընտրութիւն անել լօգուտ ալս կամ ալն վարկանտին, իբրև օրինակ, թէ Անձ. ձեռագիրը կարելի չէ անպալման կերպով ընդունել իբրև միակ ճիշտ

և արժանահատ բնագիր Նդիշէի վարդանանց պատմութեան, վեր առնենք մի քանի տարրեր ընթերցած վեճեական տպագրութիւնից (1859), որոնք ակելի ճիշտ են երևում, քան Անձ. օրինակինը, որովհետեւ նոքա ստուգւում և հաստատւում են միւս պատմագիրների ընթերցածներով, որպէս և օտար աղբիւրներով. — Արդեանք (վեճ. տպ. էջ 60) և Արդէօնք (I տպ. էջ 78) տեղի անունը, որ հաստատւում է Փաւստոսից (և, 6), — Անձ. օրինակը (էջ 73) ունի Սարդեանք, Նոնսպէս Դասան (վեճեական. տպ. 39) ազգի անունը, որ ստուգւում է ասորի և արաբացի հեղինակներից (Mat. arm. n. E. Patkanova, II, 12), — Անձ. օր. ունի Դարսան (էջ 49), Դարձեալ վեճ. տպ. (էջ 20) հետաքրքիր ընթերցած վաղուկ հրամատար, որ ակելի մօտ է հին Պարսկ. framatar և նոր Պարսկ. buzurg framadar (Nöldeke, Tabari; 9. Hoffmann, Auszüge... 293) — Անձ. օր. (էջ 27) ունի վ. հրամանատար՝ ըստ երեւթին լեռն սրբադրած:

Նթէ հրատարակիչը հարկաւոր էր համարել Նդիշէի տարրեր ընթերցածներին վերաջ մատնանիլ անել, պէտք էր, ինչպէս ասացինք, նախապէս քննական կերպով ուսումնասիրել նոցա, որից արդարեւ շատ բան կարող է պարզւել. և իմից ակելի, եթէ ոչ «Նդիշէի պատմութեան բնագրի լուսարանողից» պահանջելու էր պսպլիսի մի քննական աշխատութիւն: Ուրիշ տեսակ մենք չենք հասկանում՝ ինչ կը նշանակէ բնագրի բըւսարանել. իսկ եթէ նա բաւական էր համարել իւր մասնաւոր նպատակի համար միայն Անձեանցեաց օրինակը, էլ ինչ հարկ կար համեմատել նրան միայն վեճեական տպագրութեան հետ՝ մի կողմ թողնելով բոլոր մնացեալները:

Նւ գոնէ միայն ալ օրինակի հետ արած համեմատութիւնները ճիշտ լինէին և լիամասն. ալ էլ մի փոքրիկ ծառայութիւն կը լինէր Նդիշէի բնագրի ուսումնասիրութեան համար, Բայց ցաւակցարար աղպէս չէ՝ Նդիշէի նոր հրատարակութեան ընթերցողը պէտք է կարծէ, որ վեճեական տպագրութեան տարրերութիւնները Անձ. օրինակից սպառւում են նրանով, ինչ որ ցոյց է տւել հրատարակիչը լուսանցքներում, Վըսխալի: Ալդ մասին փոքր ի շատէ ուղիղ զազախար կազմելու համար՝ աչքից անցնենք վարդանանց պատմութեան հէնց առաջին տողերը, որով Նդիշէն զիմում է իւր Մեկենաս Դաւիթ Մամրիոնեանին — էջ 9 — 11 և կը համոզւենք, որ 54 տողի մէջ մոռացւած են և չեն լրջւած վեճ. տպ. 13 տարրեր ընթերցածները («Նթն») 3 անգամ, «արեւելաց», «այցելութիւն», «երեւելոք», «իմաստութիւն», «իսաւասիրութեան», «սէր», «ներորդութիւն», «և» 2 տեղ չէ ցոյց տւած և 1 տեղ չէ նշանակւած վեճ. տպ. բառերի դասաւորութեան կարգը: Մի ալ օրինակ. բանաձև բնագրի 27-րդ էջը և ստուգենք՝ արդեօք Միհրեբեհի հայերին գրած հուշակաւոր նամակը (էջ 27 — 29 Անձ. օր.) որքան ճիշտ է համեմատած վեճ. տպ. հետ. և անս

83 տողի մէջ 22 վարկանոտ մոռացած են և չեն նշանակած: Ապաւէս պէտք է կարծել մեծ մատամբ և մնացած բնագիրը: Ահաւասիկ և Վեն. տպ. մի քանի չատուկ անունների տարբեր ընթերցումները՝ Նոյնպէս չը լինած տ. Յովհաննիսեանցի համեմատութիւնների շարքում: Դասան չը լինած տ. Յովհաննիսեանցի համեմատութիւնների շարքում: Դասան (39), Նրամոնք (60), Արդեանք (60), Ձողկերտ (60), Սերաց (55), Ստահ- (39), Նրամոնք (60), Արդեանք (60) և այլն:— Էլ ինչու էր պէտք ապաւիտի բաշապուհ (7), Վատդեռք (139) և այլն:— Էլ ինչու էր պէտք ապաւիտի պակասատու համեմատութիւններ անել և ինչ օգուտ նոցանից:

Բացի վարկանոտների թերութիւնից՝ բնագիրն ունի բազմաթիւ վրիպակներ, որոնք անշարմար են մի դասագրքի համար. դոցանից շատը չէ էլ մտած գիրքի վերջում ղեռնդած վրիպակների աղիւսակի մէջ. օր. հէնց առաջին երեսներից աչքի են ընկնում—էջ 10, 11, 13, 14, 15 (երկու անգամ), 17, 18, 23, 25, 27, 28... ղանց արած հրատարակչից: Բաւական տարժան և անհորհակալ աշխատութիւն կը լինէր 182 երեսից բաղկացած բնագիրը նորից սրբագրել և՛ որ գլխաւորն է՝ համեմատել նրան Թէոդոսիաւում լոյս տեսած Անձեացեաց օրինակի հետ. բացի սորա- նից «աշակերտների դործածութեան համար» պատրաստւած ձեռնարկում պէտք էր բնագիրը դիւրեթեւեւ, աւելի խոշոր տառերով տպագրել, ընթերցողների դիւրութեան և չարմարութեան համար չեղանակները ամեն մի երեսի գլխին խորագրել (ինչպէս Վեն. և Թէոդոս տպ. մէջ) և վերջապէս բնագրի վերջում չատուկ անունների ցանկ (Index) դնել, որ մանաւանդ մի պատմական գրածի համար անհրաժեշտ է և որ նոյն- պէս ունին Վենետ. և Թէոդոս. տպագրութիւնները:

#### բ. Ծանօթութիւններ և Յառաջաբան

Նախ պէտք է մի ընդհանուր նկատողութիւն անել, որ լուսաբա- նութիւն կամ մեկնութիւն մատենագրի իմաստների, սորան չա- տուկ ասացածների, խրթին ու դժւար ըմբռնելի դարձածների և առ- հասարակ տողագրանական, համաձայնական և ոճագիտական (СТЕЛЛОСТ- ВОСТІ) գիտողութիւնների—բնաւ չը կալ ալս հրատարակութեան ծանօթու- թիւնների մէջ, որոնց նիւթը սպառւում է միայն պատմական և աշ- խարհագրական անունների բացատրութեամբ: Մինչդեռ «Նպաստում և Ռուսիաւում լոյս ընծալած կլասիկական լեզուների դասագրքերը», որոնց վերաջ պնդում է հրատարակչը,—խկապէս նպատակ ունին նախ և առաջ աշակերտին իրան պարզելու և հասկանալու նպատող քերական- նական լուսաբանութիւններ ընծալել, որոնք բնագրի ուսումնասիրու- թեան համար շատ կարևոր են և աւելի հմտութիւն և փորձ են պահան- ջում, քան ալ և ալ պատրաստ աղբիւրներից մի քանի տառնակ պատ- մական և աշխարհագրական ծանօթութիւններ հաւաքելը: Իսկ Նիշիէի բնագիրը՝ չը նախելով իւր վերին աստիճանի հետաքրքրական բովանդա-

կուլթեան և գրաւիչ շարադրութեան, ունի դժարին և մեկնութեան կարօտ շատ դարձածներ և հատուածներ:

Այսպէս ասելով լաւտնի բան է եւ բնաւ չեմ մերժում պատմական և աշխարհագրական ծանօթութիւնների կարեւորութիւնը. ընդհակառակը, զոքա են, որ կարեւոր քերականական լուսարանութիւններից լիտով՝ լրացնում և ամբողջութիւն են տալիս աշակերտի գաղափարին իւր ուսումնասիրած մատենագրի մասին: Բայց ծանօթութիւն էլ կալ, ծանօթութիւն էլ, պէտք է բաւական փորձառութիւն բացատրութեան կարօտ նիւթերն ընտրելու և՛ եթէ ոչ ամեն մասում ինքնուրուշ լինել, զոնէ բարեխղճութեամբ ուսումնասիրած լինել նիւթին վերաբերեալ գրականութիւնը, տեղեակ լինել բանասիրութեան վերջին արդիւնքներին և եթէ ալ և ալ արդէն վաղ լոյս տեսած աղբիւրներից փոխ առնելով պէտք լինի կրկնել ո՛ր և է դիտողութիւն կամ բացատրութիւն, — զոնէ նախընթացներից սոսոր պիտի չը լինի ալ՝ իւր ճշտութեան և գիտնաւորութեան աստիճանով: Կարծում ենք, որ բաւական չափաւոր են մեր պահանջները:

Այս ընդհանուր նկատողութիւնից՝ անցնենք մանրամասնութիւններին և առաջ բերենք մի քանի օրինակ.

1. Կան ծանօթութիւններ թերի կազմած, ուր մանաւանդ նկատելի է անգլիտութիւն հալ պատմութեան կարեւոր քննական գրածները՝ վերաբերութեամբ ժամանակագրութեան: Մանօթ, 4-րդ, 5-րդ, 6-րդ — Տիրանի, Արշակի և Արտաշիւի (=Արտաշէս վերջին) թագաւորութեան տարիները նշանակած են հին թակարդութեան հետեւելով, որ սխալ է, ինչպէս հաստատուն կերպով վաղուց ապացուցած է օտար պատմիչներից: Խնչպէս կարելի էր Մեծն Տրդատի թո՛ւ Տիրանի թագաւորութիւնը զնել 353—364 թ. և սորա որդի Արշակինը 364—380 թ., երբ որ բիւզանդական պատմութիւնից պարզ երևում է, որ Արշակ ժամանակակից էր, նաև դաշնակից Յուլիանոս կալսեր, որ վախճանւեց 363 թ. Քրիստոսի, իսկ Արշակի որդին Պապ ժամանակակից էր Վաղեր կալսեր, որի օրով և մուտ 374 թ. (ըստ Գաթրճեանի), իսկ ինքը Վաղէս — 378 թ.: — Ուրեմն ո՛չ Տիրան կարող էր թագաւորել մինչև 364 թ. և ո՛չ Արշակ մինչև 380 թ.: — (Համմմ. Lebeau (S. Martin) Hist. du Bas-Emp., մանաւանդ հ. 8. Գաթրճեանի Տիեզ. պատ. եւ և Langlois-ի աղիւսակը:

2. Մի օրինակ՝ թէ ինչպէս անփութ է օգտուած հրատարակիչը իւր ձեռքի տակ եղած և իւր ծանօթութիւնների մէջ որոշակի լիշած աղբիւրներով: Մանօթ. 124: Կամելով մեկնել թէ ինչ է Վահեռուհեաց նախարարութիւնը, որ պատահում է բնագրի էջ 42, 85, 91, հրատարակիչն ասում է. Վահեռուհի կամ (?) Հաւուհիք հալոց նախարարների կարգն անցան Վաղարշակ առաջինի օրերում. նոցա անւամբ Արարատեան նահանգի գաւառներից մինը կոչւում էր Խաւուհիք (հ. Ինճիճեան), Հ. Ալիշանը կարծում է (յ) թէ հին Հաւուհիքը ալթմեան վերին Բասենի արևե-

լեան հարաւային մասն էր. (տես Արարատ, էջ 27.) Գահնամ. 55-րդ տեղն—Նախ՝ Վահագուհի ք և Հաւուհի ք բոլորովին տարբեր նախարարութիւններ էին. դոցանից առաջինը նշանաւոր տոմ էր՝ ըստ Խորենացու Վահագնից ծագած և Գահնամակում 9-րդ բարձն ունէր. իսկ Հաւուհի ք, Վաղարշակի օրով միայն առաջացած, բաւական աննշան տոմ էր և Գահնամակում 55-րդ բարձն ունէր։ Երկրորդ՝ Հ. Խնձիճեան (Ստորագր. 380, Հաւուհի ք անւան ծանօթութեան մէջ) ասում է՝ թէ «իմիռում (sic!) ձեռագրի Աշխարհ. Խորենացու գրի Վահագուհի ք» (փոխ. Հաւուհի ք),—որ հարկաւոր էր նկատողութեան առնել, Երրորդ՝ Նոյն «Արարատի» վրած 27-դ էջում ահա ինչ է ասում բաղմահմուտ զխոնակմանը. «80-րդնակագիրս պէս պէս ընծալի անուճդ՝ Հաւուհի ք, Հաւուհի ք, Հաւուհի ք և վրիպակաւ շփոթեալ (sic!) երբեմն ընդ Վահագնիս»։—Ուրեմն էլ ինչպէս կարելի էր ասել «Վահագուհի ք կամ Հաւուհի ք»,—նոյնացնելով երկու տարբեր նախարարութիւններ և դեռ Ալիշանին էլ վկայ կոչել։

Նոյնպիսի անհոգութեամբ կազմած են ծանօթ. 101. «Սարգեանք» բառի և ծանօթ. 6-րդ Վառնապուհի միւտ անւանակոչութեան՝ «Ստահրաշապուհ» մասին, ցուց տալով առաջին բառի գործածութիւնը Փաւտոսի մօտ և երկրորդինը (Ստահրաշապուհ) Խորենացու «գր. III, գլ. ԾԸ. Վեն. 1843», ուր ալսպիսի անուաններ չեն պատահում.— Փաւտոսի մէջ չկալ «Սարգեանք», ալ Արգեանք, ալսինքն ահա տարբեր ընթերցածը, որ պատահում է Վենետեան տպ. մէջ և որ չէ ցուց տաւ Նոր հրատարակութեան մէջ. իսկ Ստահրաշապուհ վրդը Խորենացին չէ, ինչպէս սխալմամբ մատնանիչ է անում հրատարակիչը, ալ Նոյն ինքն Նդիշն՝ ըստ I տպ. (էջ 6) և ըստ Վենետեան (էջ 7), որ Նոյնպէս մոռացած է Նոր հրատարակութեան մէջ.— Թերի և սխալ կազմած ծանօթութիւններից՝ բացի անցանից, նշանակելու է—ծանօթ. 38, 50, 66, 67 և 74, 82... և ալն։

3. Մի ուշադրութեան արժանի կէտ էլ կալ Նոր հրատարակութեան ծանօթութիւնների մէջ, Յալտնի է, որ դեռ 1877 թ. Կ. Կոստանեանցը հրատարակեց իւր 3 հատոր «Հիւսւածքը», ուր մանրամասն կերպով ուսումնասիրւած է մանաւանդ Նդիշի և Ղազար Փարպեցու պատմութիւնը. բացի գրաբառ բնագրից (ա. գիրք)՝ նա տալիս է նորա աշխարհաբառ թարգմանութիւնը (բ. գիրք) և վերջապէս ծանօթութիւններ (գ. գիրք)։ «Հիւսւածքը», կարծեմ, վաղուց ընդունւած է մեր ուսումնարաններում իբրև ձեռնարկ. և մինչև որ Նորանից գերազանցը լոյս չը տեսնի, նա կը մնալ դեռ երկար.— Համեմատելով սորա ծանօթութիւնները պ. Յովհաննիսեանցի հրատարակութեան ծանօթութիւնների հետ՝ լսարանի բան է վերաբերեալ միևնույն նիւթերին,—անկողմնապահ ընթերցողը կը համոզուի «Հիւսւածքի» գերազանցութեանը թէ լրամասնութեան և

Թէ աւելի զիտնաւոր կերպով կազմած լինելու կողմից, թող որ պ. Կոստանեանցի գործը 15 տարի առաջ է լուս տեսել: Օրինակի համար համեմատենք.—

Պ. Յովհան. Թ. 15, 16... 30, 44... 66... 90... 104... 115... 141... 206  
Եւ ծանօթ.

Պ. Կոստան. Եջ. 65-69, 70-73, 78, 82-85, 104-105, 108-109, 111, 123-125, 116-121, 70-78

Աւելի աջող են նոր հրատարակութեան աշխարհագրական ծանօթութիւնները, որոնք թէև «Հիւսւածքի» նման լիամասն չեն, ալեւուսմանալիս կարող են օգտաւէտ լինել աշակերտին աշխտեղ, ուր որ լուս է «Հիւսւածքը»:

4. Ծանօթութիւնները մէջ չեն մտել բազմաթիւ բառերի մեկնութիւններ՝ վերաբերեալ ժամանակակից հայ և պարսից կեանքին: Օրինակ՝ մագալան կրօնը, որ ալիքան մեծ հետաքրքրութիւն ունի, հրատարակիչը սակարկ է համարել նաև երկտողով բացատրել մինչդեռ պ. Կոստանեանցի «Հիւսւածքը» նւիրում է աղ խնդրին 10 երես: Բացի դորանից դեռ թիւրիմացութեան տեղիք է տալիս հրատարակիչը՝ պնդելով 53-րդ ծանօթ. մէջ աղ կրօնի մասին, իբր թէ իւր հետեողներին նա «հրամարում էր գումարի դով լանալ ձեռքերը և ոչ թէ ջրով»: Այսպիսի ֆանատիկոսութեան նոյն խկ մողերն էլ չէին հասել. մաղղէզանց դէնը պատւիրում էր լանալ ձեռքերը գումարի դով, ալ, բաց ջրախառն (Տես Spiegel, Eran. Alter. III, 697-8):

Պարսից կրօնից զատ՝ բազմաթիւ բառեր պարսից և հայոց քաղաքական կազմակերպութեան, վարչութեան, պաշտօնների, նախարարական իրաւունքների մասին—որպէս՝ հրամատար, անդերծապետ, հաղարապետ, Սպարապետ, Ոստան և Ոստանիկ, Ոստիկան, տուն արքունի, Գահնեմակ և ալն—կամ բնաւ մեկնած չեն և կամ թերի ու սխալ, խնչպէս օր. «Տանուտիրական գնդի» մասին տւած մեկնութիւնը (էջ 242), որից ընթերցողը միամտաբար պիտի եզրակացնէ, թէ Հալատտանում անքան տանուտիւրական գումար կար, որքան և տանուտէր, ալսինքն՝ հարիւրներով. մինչդեռ աղ գումարը մի հատ էր, որ և կոչվում էր նոյնպէս «Մարդպետական» և «Ոստանիկ» (Տես Патк. Мат. арм. пв. II).

Մի երկու խօսք էլ չառաջարանի մասին:

1. Հրատարակիչը մի առ մի լիշում է ալն աղբիւրները, որոնցից նա օգտւել է իւր ծանօթութիւնները կազմելիս: Մեր կարծիքով՝ աղ ծանօթութիւնները շատ կողմից աւելի պիտանի կը լինէին, լիամասն և գիտութեան տեսակէտից աւելի ծանրակշիւ, եթէ հրատարակիչը ծանօթ լինէր և ձեռքի տակ ունենար Եւրոպայում վերջին 15 տարւալ ընթացքում լուս տեսած ընտիր հետազոտութիւնները, որոնք՝ վերաբերելով Սասանեան պետութեան, ժամանակակից հայոց մասին էլ շատ բան են պարզում, գտնէ Spiegel (Eran. Alt.), Nöldeke (Tabari, Art. Papakan), Gudschmidt,

Hoffmann (Auszüge) և ալլն: Իսկ Բելգիացի հափերկնադէտ Fel. Nève ունի հրատարակած դեռ 1886 թ. մի բաւական ընդարձակ ուսումնասիրութիւն մասնաւորապէս Նդիշէի մասին (կենսագրութիւն, համառօտութիւն Վարդանանց պատերազմի, նորա արժէքը, հալ ազգի քրիստոնէական ոգին, պատմագրի նպատակը, լեզուն և ոճը), որ նոյնպէս անձանօթ է մնացել հրատարակին:—Վերաբերութեամբ ДУХОВЪ-ի Նդիշէի ուսուրէն է թարգմանութեանը, որ լոյս է տեսել 1884 թ. չը դիտենք՝ ինչու պէտք է ձեռք չընկնէր (Յառաջար. էջ 40), քանի որ նա ակնքան հազազիւտ չէ:

2. Նդիշէի կենսագրութիւնը շատ թերի է կազմած և անգոյացուցիչ. (Յառաջար. էջ 40). պէտք էր գտնէ «Սովերքի» (Ժա) մէջ լոյս տեսած փոքրիկ, բայց թէ ոճի և թէ բովանդակութեան կողմից ընտիր «Պատմութիւն ս. Նդիշէի վարդապետի» ամբողջապէս արտատպել: Բացի դորանից համակրելի մատենագրի արժէքը լիովին ըմբռնելու և նորա գործն ուղիղ զնահատելու համար անհրաժեշտ էր՝ գտնէ համառօտ կերպով, պարզել Նդիշէի և Ղ. Փարպեցու գրածների փոխադարձ չարաբերութիւնը և իւրաքանչիւրի տեսակէտը, առաջ բերել նոյն Նդիշէի բնագրի ամբողջութեան խնդրին վերաբերեալ թոմալ Արծրունու հաղորդածը Բարսումալ Ասորու մասին որպէս և Պարսից կրօնի վերալ Նզնիկի գրած հետաքրքրական տեղեկութիւնները:—Ծանօթութիւնների մէջ, ուր որ կրեմն 7 երես է նւիրում բանաստեղծական նկարագրութիւններին (Ժան. 149, էջ 218—225), կարելի էր մի անկիւն գտնել և ալպիսի կարեւոր խնդիրների համար:

#### դ. Բ ա ո զ ի Ր ք

Ո՛ր և է մատենագրի և մասնաւոր՝ դասական մատենագրի գրածի համար մասնաւոր բառարան կազմելը լաւ միտք է, եթէ իւրաքանչիւր բառ նոյն իմաստով է մեկնած կամ թարգմանած, ինչպէս գործ է ածել ալլ մատենագիրը: Թողնենք ալն անտեղի դադափարը, որով հալ ուսումնարանների համար «կլասսիկական լեզուների դասագրքերի» նման լուսաբանած Նդիշէի պատմութիւնն առաջարկում է հափերկնադէտ ուսուրէն բառարանով՝ առանց աշխարհաբառի. թողնենք ծանրաշալ նմա բառարանակազմութեան ան տարրական պահանջների բացակայութեան վերալ, որի շնորհիւ բառի մի քանի նշանակութիւն ունեցող նբութիւնները չեն որոշում իրարից պատշաճաւոր կէտադրութեամբ, չը զանաազանելով նախ՝ բառի սկզբնական նշանակութիւնը, ապա տեխնիկական, ապա փոխաբերական, ապա որոշ դարձածի մէջ և ալլն <sup>1)</sup>:—Բառարանի

<sup>1)</sup> Ալլ մասին մի օրինակ. տես բառարանում. — «արտաքին»

դիտարար նպատակը պէտք է լինի առաջարկել բառի բուն և ճիշտ նշանակութիւնը՝ լինի դա հալերէն աշխարհիկ, թէ առաներէն: Այս տեսակէտից նախելով Սղիշէի նոր հրատարակութեան բառարանի վերաջ՝ փոքր ինչ մանրամասն պէտք է խօսենք, նկատի առնելով, որ այս բառնի մէջ է խակապէս երեսմ հրատարակչի աւելի ինքնուրույն աշխատութիւնը, եթէ բնագրի տարրեր ընթերցածներ նշանակելը մի տեսակ մեքենական դործ համարենք, որպէս և այլ և այլ աղբիւրներից ծանօթութիւններ ընտրելով փոխառութիւն:

1. Շատ բառեր և դարձեալներ անճիշտ են թարգմանած առաներէն՝ աւելի նոցա ընդհանուր կամ հեռուոր իմաստը բացատրելով, քան բուն նշանակութիւնը հաղորդելով:

Ահա մի քանի օրինակ. բառարան, էջ 385.—«ցրուէր զառաջին հատաստուն երդումն—нарушилъ свою страшную (sic!) клятву». Ո՛ւր է ալտեղ страшный.

էջ 315.—(Գառնար ի պատերազմէն) «կորակոր և ոչ բարձրագլուխ—возвратился побѣжденнымъ, а не побѣдителемъ». բոլորովին կորչում է Սղիշէի գեղեցիկ համեմատութիւնը:

էջ 385.—«Ի խոր խոցեալ ի խորհուրդն—застигнутый врасплохъ событіями», քանի որ Սղիշէն ուզում է ասել—սաստիկ, չարաչար վշտացած լինելով իւր սրտում—огорченный до глубины души, глубоко пораженный въ самое сердце.—(Տես Հալի. բառ.):

էջ 271.—«Աղիքն գալարէին լսել զմեզիւն բեկեղոցն—страшное потрясение овладевало человекомъ, слыша крикъ пораженныхъ». —ալ՝ միայն հեռուոր իմաստն է հաղորդում, և ոչ բուն նշանակութիւնը: Գոնէ ասելու էր—сердце сжималось, сердце разрывалось...

էջ 269.—«Հալելով ի մի իշխանն անխառն—но повинуются единому властителю». —անխառնն չէ թարգմանած և իմաստն էլ

языческій (sic!), вишній, иноземный, наружный». բառի բուն նշանակութիւնն է наружный, որ ամենից վերջն է դրած. միայն փոխաբերական մտքով նա կարող է նշանակել «иноземный, языческій» և մանաւանդ небуховный, мірской, свѣтскій, որ չէ որոց տաճ բառարանում.—«Ապա ժողով—пролитая кровь (sic!), отвратительный, нестерпимый». Ապա ժողով կազմւած է ապա (բացասակ. մասնիկ) և ժողով (ժողովալ, համբերել, տանել)—բառացի՝ անտանելի կը նշանակէ և միայն փոխաբերական մտքով կարող է նշանակել շաղխ, թափած արիւն:—Նոյն տեսակէտից համեմատէ և առաջիկալ բառերը. բռւռն, բացատրել, դործակալ, նորատիք, շարժ, պատշգամ, վնաս, օրապահ, և այլն և այլն:

չէ պարզած. արտեղ հակադրած են—«տարերք խառնեալք...  
և Աստուած ան խառնն» (բնագիր, էջ 35), որ պէտք էր ան-  
պատճառ շեշտել:

Էջ 318.—«Հաղարապետ—великийъ вѣнръ». — ուրեմն հալերը՝ հպատակ լի-  
նելով պարսից, արեւամենակելու ունէին իրանց մեծ վէզիրը,  
որովհետեւ Հաղարապետն արդ միջոցին վահան  
Ամատունին էր: Բայց արդեօք նա մեծ վէզիրն, թէ ակ  
պաշտոն ունէր:

Էջ 389.—«Բաւականքին—купленныйъ дорогою (sic!) цѣною». ինչու ճո-  
րոցով, երբ որ արտեղ լով քսակով է նշանակում կամ քա-  
ղաքով—հակառակ «հալերնիք»-ին (наслѣдственн. կամ  
вотчина) և «պարզականք»-ին (дарственный). տես բնագիրը,  
էջ 78:

2. Շատ դարձածներ՝ բնագիրը չը հասկանալու պատճառով, սխալ  
են թարգմանւած ուսերէն. օրինակներ՝

Էջ 390.—«ձակատ հարեալ և զօձիս պատառեալ—сѣ понижшимъ че-  
ломъ...». ինչու понижшимъ, երբ որ խօսքը վիրաւորած, ջարդ-  
ւած ձակատի մասին է:

Էջ 359.—«Կանձանց պարմանն զվնասն (տէնք)—они себѣ причиня-  
ютъ вреда (sic!)», մինչդեռ պարմանքն պէտք էր արտեղ՝  
շօշափել, զգալ բարբի իմաստով թարգմանել. (տես Հակո-  
բաւ.)—они сами чувствуютъ (свою) гибель.

Էջ 306.—«Ընդունան եղեալ ի նոյն խորհուրդս—планы его оказались  
тщетными», որ սխալ է. իմաստն է՝ Յաղկերտ նոյն ընդունան  
խորհուրդներն մէջ մնալով:

Էջ 293.—«արկանէր (Արշէն) զուր առաջի ուրացելուն վասակալ—выра-  
жалъ соболѣзнованіе къ отступнику Васакъ (?!)».   
ամենեւին ոչ. Արշէն քահանան աշխատում էր շարժել վասակի  
զուրքը դէպի անմեղ ժողովուրդը:

Էջ 340.—«ածէր զօրավարն (Վարդան) զկաց մնաց զօրականին—полно-  
ведетъ позаботился снабдить войско правіантомъ (?!)».   
կաց մնաց մնացորդ ասել է—остатокъ. իսկ правіантъ  
լալանի չէ թէ՛ Բնչ տեղից է առնւած <sup>1)</sup>:

<sup>1)</sup> Արաբիսի անճառութիւններ երեւի թէ առաջացել են Паншиевъ-ի  
Նդիշէի ուսա թարգմանութեան ազդեցութիւնից, որ խկապէս փոխա-  
դրուած է և երբեմն շատ ազատ—ոչ թէ բնագրից, այլ Kabaragy  
Garabed-ի առանց արդ էլ ազատ ֆրանսիական թարգմանութիւնից. Օր-  
համեմ. Նդիշէի բնագիրը—էջ 73 («ձակատ հարեալ», 74 («կաց մնաց»),  
76 («կորակոր»)... և Паншиевъ-ի թարգմ. էջ 129, 131, 136....

3. Բառարանն առհասարակ թե բն է կաղամած. բաղմամբիւ բառերի տակ չէ ցոյց տաւ ընդգրկի իմաստին համաձայն նշանակութիւնը, ուստի և չեն էլ կարող նոքա ճշտութեամբ թարգմանել ուսանելէն, որով ուրեմն բառարանը չէ համապատասխանում իւր գլխաւոր նպատակին՝ Օրինակներ.  
 — «Ա ն որ ու ղ ա լ ը — ЛИШЕННЫЙ ЖИВОТА, ЧРЕВА». Բնչպէս պէտք է թարգմանի «անորովայն դեք».— դեկու էր նաև безтлѣсный.  
 — «Գ ու լ զ — ОТРЯДЪ, ПОЛЕЪ». Հապա «գունդ հրկշտակաց».— նշանակելու էր նաև сонмъ (ангеловъ).  
 — «Եր ա զ ա գ է տ — СНОТОВАТОУДЪ». Բնչպէս պէտք է թարգմանի բնագրի (էջ 19) «որոց ողիքն թուացեալ են... եր ա զ ա գ է տ է ախարիսին ի կեանս իւրում».— Այտեղ երազագէտ — երազահան տակ չէ, այլ Բնչպէս զեղեցիկ մեկնում է («Հալկ. բնագ.»)— իբր երազագէտ, լուզեալ մտտեօք».  
 — «Կ ե ա ն ք — ЖИЗНЬ». Բացի այդ ընդհանուր նշանակութիւնից՝ Եղիշէն շատ տեղ գործ է ածում և՛ մասնաւոր իմաստով — գ ու ղ ք, ս տ ա ց, լ ա ծ — нмущество, որ ցոյց տաւ չը լինելով բառարանում, թիրիմացութեան տեղիք պէտք է տալ աշակերտին.  
 — «Թ ա փ ա ն ց ա ն ց — прозрачный, чистый». — Թարգմանեցէք ալս նշանակութիւնների համաձայն բնագրի (էջ 35)— «իսկ օդն թ ա փ ա ն ց ա ն ց է ընդ հուրն և ընդ ջուր».  
 — «Ն որ ա թ ե ք — СВѢЖІЙ, НЕОФІТЪ». — Բնչպէս պէտք է թարգմանի «նորաթեք մարդ» (Աղամ). դեկու էր նաև դորան համանիշ նորաստեղծ բառի նշանակութիւնը (Տէս Հալկ. բառ.).  
 — «Ս ա լ ա չ ա տ ա կ — МОСТОВАЯ». — Բնչպէս պէտք է թարգմանի ալս փիլիսոփայական ներութիւնը. «իսկ զ'իվալը ծորելի բնութիւն ջրոյն՝ սալալատակ տրամացուցեալ հողոյն կալմամբ...» (բնագ. էջ 35).

4. Չը տեղաւորելով մի կողմից շատ բառերի՝ բնագրի իմաստին համաձայն նշանակութիւնները, միւս կողմից հրատարակելը շատ լաճախ դնում է բառարանում 7—8 և ավելի տող պարզ և հասկանալի բնագրի ուսանելէն թարգմանութիւնը (որ ապարդիւն մի աշխատութիւն է և հազիւ թէ օգտաւէտ մանկավարժական տեսակէտից), փոխանակ մի երկու խրթին բառի կամ դարձածի իմաստը միայն պարզելու և թարգմանելու Օրինակները տես բառարանում—Միևնուց ժամանակ ալդ թարգմանութիւնների մէջ նկատուում են սխալներ ուսանելէն լեզվի դէմ. օրինակի համար տես էջ 277, 323, 246, 248, 343, 259....

5. Վերջապէս պէտք է նկատել և այն, որ բառարանը չէ ամփոփում բնագրում պատահած բոլոր բառերը, դոնէ առանց մանրամասն հետազոտութեան՝ պատահմամբ դիտեցի ես մի քանի բառերի բացակայութիւնը. — ա ն ի ս աւ ն, ա բ հ աւ ի ը ք, գ ա ն ձ, կ ա չ ծ, ու ղ ե ղ, ս ն ն ե կ տ պ ա ն... կարելի է էլի գտնւան պակաս բառեր:

Բնագրի տպագրական սխալներն մասին վերն արդէն վիշ-  
ցիւ. բառարանի մէջ էլ շատ կան արդարի սխալներ (կողմիտ՝ լոյն բառերի  
և մանաւանդ մի գէպքում—հալերէնի մէջ)—չը տեղաւորած վրիպակներն  
աղիւսակում:

Աղայիսի թերութիւններով բառարանը, որ՝ կազմած լինելով քա-  
կապէս միակն Նդիշէի բնագրի վերաջ, աչնու ամենաչնիւ մա-  
տենագրին լատով՝ լեզւի ու ոճերի բոլոր նորութիւնները լիովին չէ  
առաջադրում,—հազիւ թէ զոհացուցիչ լինի մեր ուսումնարանների համար  
թողնեք թանգ գնոց և սակամատչելի Հալկազ. բառգիրքը՝ ալդ  
արդարեւ զանձարանը հալ լեզւի, որ տալիս է մեզ համարեա ամեն մի  
բառի ճիշտ մեկնութիւնը և նշանակութիւնը՝ մատենագիրների մանրա-  
մասն վկայութիւններով հանդերձ. (ուստի և չինք հասկանում, ինչ մտքով  
է ասում Նդիշէի հրատարակիչը (Յառաջաբ. բ.), թէ նա «հնացած» է.)—  
նմե խոսեալ բանն է բառարանում (որին՝ մեր համոզմունքով, ասելի  
կը վալելէր հնացած խօսքը՝ մանաւանդ ուսանելի վերաբերմամբ), նմե  
Խոսքարաչեանի բառարանում Նդիշէի բառերի և դարձածների ուսանելն  
նշանակութիւններն ասելի պատշաճաւոր և լիամասն են, քան թէ ալդ  
կատարած է նոր հրատարակած Նդիշէի մասնաւոր բառարանում  
(Համեմատէ գոնէ վերը գիշած բառերը—բարձրագլուխ, թափան-  
ցանց, կաց մնաց, կորակոր և ալն), Խոսքարաչեանի աշխատութեան  
հազւագիւտ լինելն էլ (չառաջաբ. բ.) ծանրակշիւ շարժառիթ չէ թե-  
րատ և պակասաւոր բառարան լորինելու, քանի որ մեր ազգային դպրոց-  
ներում Խոսքարաչեանը գործածելի չէ:

Պէտք է մի քանի խօսք ասել ն՝ բառարանի լեզւագիտական  
համեմատութիւնների առիթով: Իրտելու է մի անգամ ընդմիշտ, որ ալդ  
համեմատութիւնները բոլորովին անտեղի են աչնալի դասագրքում, որ  
անփորձ, լեզւագիտութեան դեռ բոլորովին անպատրաստ աշակերտների  
համար է նշանակած: Այս մի աչնալի ճշմարտութիւն է, որ «վրասիկա-  
կան լեզւի» ոչ մի ուսուցիչ չէ կարող ուրանալ, որպէս և չէ կարելի ու-  
րանալ, որ լեզւագիտութիւնը շատ հետաքրքրական գիտութիւն է, թէ և նա  
էլ իւր տեղը, իւր աւանդութեան չափն ու սահմանն ունի: Մեր կարծի-  
քով՝ շատ ասելի օգտաւէտ կը լինէր և ուսումնասիրութեան համար ասելի  
նպատակաւարմար, եթէ՝ փոխանակ դեռ չը հատաւած, դեռ վիճելի (օրի-  
նակ Ս. Բուզգէի եղբակացութիւնները), շատ անգամ նմե խառնաշփոթ  
լեզւագիտական համեմատութիւնների,—հրատարակիչն առաջարկէր բա-  
ռերի կազմութիւնը և ստուգաբանութիւնը:

Իջնելով լեզւագիտական համեմատութիւնների մանրամասնութիւն-  
ներին, պէտք է աչնու ամենաչնիւ մի երկու համառօտ գիտողութիւն անել  
ա.—Այտեղ բոլորովին չէ պարզած մի շատ կարեւոր կէտ. կան հա-  
լերէն բառեր, որոնք ազգականից են միւս հնդկի եւրոպական լեզուան-

րին. սոցա շարքում հալերէնը իւր ինքնուրոյն, սեպական տիպարն ունի և իւր անկախ տեղը, մօտենալով աւելի Եւրոպական խմբին և մասնաւորապէս Բոսնականին և Սլաւո-Վիթականականին. — կան և բաւականաչափ աչնալիս հալ բառեր, որոնք ուղղակի փոխ են առնւած՝ մասնաւոր իրանական լեզուներէն, որոնց մէջ հին պարսկէրէնը, պահլաւ, պարսի (կամ Հոլլարէշ) և Նոր-Պարսկէրէնը շատ անգամ խառն և չփոթ զետեղւած են Բաւարանում՝ առանց ո՛րոշակի նշանակելու Գործից անտեղեակ մարդը չը պիտի կարողանալ ազգակցութեան և փոխառութեան ալ կարևոր խնդիրն ըմբռնել բաւարանի միջոցով, որովհետեւ դորա համար սրն է մեկնութիւն կամ հրահանգ ցուց տւած չէ:

բ. — Հալերէնի մերձաւոր ազգակցութիւնը Թուն և Սլաւոն լեզուների հետ, Սլաւոնականի կարևորութիւնն իրեն արմատ հին ու նոր ուսուերէնի և վերջապէս կլասսիկական (լոյն և լատին) լեզուների աւանդութիւնը գիմնադրոններում, - բաւական ծանրակշիռ փաստեր են, որոնց հիմամբ հալերէնի հետ բաղդատելիս՝ վիշալ լեզուների համեմատական նիւթերին մասնաւոր կարևորութիւն պիտի տրւէր: Մինչդեռ մի քանի տասնեակ ամենագործածական բառեր ենք մենք նշանակել Բաւարանում, որոնց մօտ պակասում են հալերէնին ազգակից՝ Սլաւոն, Թուն և լատին ձեւերը, — միւս կողմից փոխ առնւած հալերէն բառերի տակ մի առ մի նշանակւած են համանման Սանսկրիտ, Ջենդ, Պարսիկ ձևերը, որ բաւորովին աւելորդ էր:

### Ե զ ր ա կ ա ց ու թ իւ ն

Բոլոր մեր ասածներից եղրակացնում ենք.

1. Բնագիր — Անձնացեաց օրինակի համեմատութիւնը Վենետիկան տպագրութեան հետ շատ պակասաւոր է. Եղիշէի տարրեր ընթերցւածները քննական կերպով ուսումնասիրւած չեն. նոր հրատարակութիւնը հների վերալ առաւելութիւն չունենալով՝ դեռ աչն պակասն ունի, որ անփոթ կերպով է հրատարակւած վարիանտների կողմից և բացի դորանից բաւական տպագրական սխալներ ունի, որոնցից նոքա զերծ են:

2. Մանօթութիւնն և ըրի մէջ բոլորովին բացակալ են քերականական լուսարանութիւնները, որոնք դասագրքի համար կարևորագոյն են. — պատմական ծանօթութիւնները կազմելիս պէտք էր տեղեակ լինել նորագոյն կարևոր հալ և օտար հետազոտութիւններին և աւելի հնչտութեամբ և զգուշութեամբ օգտւել նախկին՝ աւելի լիակատար համանման հրատարակութիւններից՝ աւելի նոցա լրացնել ձգտելով, քան կիսատ, թերատ կրճատելով:

3. Բաւարանը՝ բացի աշխարհարաւի բացակայութիւնից, անփորձ ձևերով է կազմած, թերի է և անգահացուցիչ — շատ անգամ բառի բուն

Նշանակութիւնը չը տեղաւորելով, լաճախ՝ բառի կամ դարձւածի ընդհանուր իմաստը միայն հաղորդելով, փոխանակ բառացի և ճիշտ թարգմանութեան բաւական ստէպ՝ անճիշտ ու սխալ թարգմանելով զոցա ուռակէն։ Լեզուագիտական համեմատութիւններն անտեղի են «աշակերտների գործածութեան համար»։

Քննական կերպով ուսումնասիրւած Եղիշէի բնագրի, որ միևնույն ժամանակ հմտութեամբ լուսարանւած լինէր կարևորագոյն ծանօթութիւններով,—մենք արդարև կարօտութիւն ունինք, Եթէ ձգտում և պահանջ կար՝ գոչը լինելով հին փորձերով, նորը կազմել, պէտք է որ ալը նորը իւր *raison d'être*-ը—գոյութեան իրաւունքն ունենալ հնրի շարքում՝ Եթէ ոչ գերազանցելով նոցա, գոնէ և ոչ զիջանելով։ Այս օրերս լուս տեսաւ Եղիշէի նոր հրատարակութիւնը «ճոխացրած ծանօթութիւններով և բառագրքով»։ Բայց ալը կարօտութիւնը՝ մեր կարծիքով, նույնչափ զգալի է և անհրաժեշտ ակժմ, որ չափ և առաջ։

ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՑ.